գին, հանել գիր արքունուստ վասն այսր։ գրեաց Թէոդորոս Պատրիարք և առ Մանուէլ Պէյ հայկազն Իշխանաւոր, որ 'ի նոյն աւուրս եկեալ էր 'ի Կոստանդինուպոլիս 'ի Պուքրէշէ, և յորդորեաց զնա լինիլ միջնորդ առ մեծամեծս Դրան վասն շինութեան բաժին տեղեացն Հայոց։ Գրեաց և առ Պատրիարքն Ղալթոց յեգիպտոս, հոգալ ըստեղիս իւրեանց։ զի ամենայն գոյք և գրեանք նոցին այրեցան 'ի հրկիզութենէ։ Եւ զկնի աւուրց ինչ մաքրեցին զՍ։ Յարութիւն 'ի հողոյ և 'ի փոշւոյ, և կարգեցին իւրաքանչիւր ազգ զպաշտօնեայս՝ կատարել անխափան զհոգեւոր պաշտօնս իւրեանց։ Նոյնպէս և Հայք 'ի Ս։ Լուսաւորիչ։ Եւ շինել քաղաքապետն առ ժամանակեայ կերպիւ զդուռն տաճարին, բանալ և փակել ըստ սովորութեան։

Իսկ սակս թաղելոյ զմարմին Մելքոն վարդապետի որ մեռաւ 'ի հրայրեացսն, ընդդէմ կացին այլազգիք, զի չէր օրէն հանել մեռեալ 'ի տաճարէ անտի, մինչեւ առին տուգանս 'ի Հայոց՝ և ապա թոյլ եղուն։ Թէոդորոս Պատրիարք գրեաց վասն այսր 'ի Դուռն 'ի ձեռն դատաւորին եւ ամբաստան եղեւ զբռնութենէ այլազգեաց։ գրեցաւ հրովարտակ սաստել զայլազգիսն զի մի՛ բռնացին 'ի վերայ քրիստոնէից վասն թաղման ննջեցելոց իւրեանց։

Հասին գրեանք դատաւորին 'ի Կոստանդինուպոլիս, զորս տուեալ էր Հայոց, Յունաց և Լատինաց, կամ 'ի միասին և կամ իւրաքանչիւր ազգ չինել զբաժին տեղիս իւրեանց։ սակայն Յոյնք ոչ առին զայս յանձն և ոչ միաբանեցան ընդ այս, զի կամէին միայնակ չինել, եւ խսլառ վանել անտի զՀայս եւ զԼատինս։ Զի յաւուրս Եուսուֆ Փաշայի՝ առանց իմանալոյ Հայոց գաղտնի հանին հրովարտակ չինել զսեփհական տեղիս իւրեանց, ըստ առաջին ձեւոյն և որպիսութեան՝ համաձայն վճռոյ մեծի դէնպետին, որ և պատրաստեցին զգործաւորս և զամենայն հանգերձանս չինութեան հանեալ 'ի նաւ, եւ ճարտարապետ զոմն Ղումպիանոս անուն։ առին և վերակացու 'ի Դրանէ Էլմաս Փաշա Զատէ մէր Ապտրահման Պէյ։ Ճարտարապետն չոքաւ առ վերատեսուչն Արքունի նաւատեղեաց (Թէրսխանէ Էմինի) ասել մեաս բարեաւ, ուր նստէր յայնժամ